«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱՉՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ»

2-րդ միջազգային երիտասարդական գիտաժողով
14-17 սեպտեմբերի 2017թ.
Արցախ (ԼՂՀ), ք.Ստեփանակերտ

ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

СБОРНИК МАТЕРИАЛОВ

2-ая международная молодёжная конференция

«ПРОБЛЕМЫ И ПЕРСПЕКТИВЫ МЕЖДУНАРОДНОГО ПРИЗНАНИЯ РЕСПУБЛИКИ АРЦАХ»

14-17 сентября 2017г.
Арцах (НКР), г.Степанакерт

‘‘ISSUES AND PROSPECTS OF THE ARTSAKH REPUBLIC’S INTERNATIONAL RECOGNITION’’

2nd international youth conference
September 14-17, 2017
Stepanakert, Artsakh (NKR)

SOURCEBOOK

ԱԵԳՄՄ-ОМУСА-UYSSA
ԵՐԵՎԱՆ-ЕРЕВАН-YEREVAN
2017

ՀՏԴ 32.001:06
ԳՄԴ 66.0
Ա 948

Հրատարակության է երաշխավորվել Ստեփանակերտի Մեսրոպ Մաշտոց Համալսարանի Գիտական խորհրդի որոշմամբ
Рекомендовано к публикации решением Ученого совета Университета Месроп Маштоц г.Степанакерта
Recommended for publication by the decision of the Academic Council of the Mesrop Mashtots University in Stepanakert

Խմբագրական խորհուրդ
Նախագահ՝ ի.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս **Գագիկ Ղազինյան**
Անդամներ՝ հ.գ.դ., պրոֆ. **Հրանտ Ավանեսյան**, պ.գ.դ., պրոֆ. **Վալերի Ավանեսյան**, ք.գ.դ., դոց. **Խաչիկ Գալստյան**, ի.գ.դ., պրոֆ. **Վլադիսլավ Գրուզդև**, ք.գ.դ., պրոֆ. **Սոկրատ Խանյան**, ի.գ.դ., պրոֆ. **Աշոտ Խաչատրյան**, ք.գ.դ., պրոֆ. **Մարիամ Մարգարյան**, տ.գ.դ., պրոֆ. **Հայկ Սարգսյան**, ք.գ.դ., պրոֆ. **Գարիկ Քեռյան**, պ.գ.թ., դոց. **Գրիգոր Բալասանյան,** պ.գ.թ., դոց. **Նելլի Բաղդասարյան**, տ.գ.թ., դոց. **Եվգենյա Հայրիյան**, ի.գ.թ., դոց. **Անահիտ Մանասյան**, հ.գ.թ., դոց. **Վիտյա Յարամիշյան**, տ.գ.թ., դոց. **Կարեն Ներսիսյան**, ի.գ.թ. **Սիրանուշ Պետիկյան**
Քարտուղար՝ ի.գ.թ. **Ավետիք Հարությունյան**

Редакционный совет
Председатель: д.ю.н., проф., академик НАН РА **Гагик Казинян**
Члены: д.п.н., проф. **Грант Аванесян**, д.и.н., проф. **Валерий Аванесян**, д.п.н., доцент **Хачик Галстян**, д.ю.н., проф. **Владислав Груздев**, д.ф.н., проф. **Сократ Ханян**, д.ю.н., проф. **Ашот Хачатрян**, д.п.н., проф. **Мариам Маргарян**, д.э.н., проф. **Айк Саргсян**, д.п.н., проф. **Гарик Керян**, к.и.н., доц. **Григор Баласанян**, к.и.н., доц. **Нелли Багдасарян**, к.э.н., доц. **Евгения Айриян**, к.ю.н., доц. **Анаит Манасян**, к.п.н., доц. **Витя Ярамишян**, к.э.н., доц. **Карен Нерсисян**, к.ю.н. **Сирануш Петикян**
Секретарь: к.ю.н. **Аветик Арутюнян**

Editorial board
Editor-in-Chief: Gagik Ghazinyan, LL.D., Prof., NAS RA Academician
Editors: **Hrant Avanesyan**, Psy.D., Prof., **Valeri Avanesyan**, Doctor of History, Prof., **Khachik Galstyan**, Dr sc. pol., Assoc. Prof., **Vladislav Gruzdev**, LL.D., Prof., **Sokrat Khanyan**, Doctor of Philology, Prof., **Ashot Khachatryan**, LL.D., Prof., **Mariam Margaryan**, Dr sc. pol., Prof., **Hayk Sargsyan**, Dr sc. ec., Prof., **Garik Keryan**, Dr sc. pol., Prof., **Grigor Balasanyan**, Candidate of History, Assoc. Prof., **Nelly Baghdasaryan**, Candidate of History, Assoc. Prof., **Yevgenya Hayriyan**, Candidate sc. ec., Assoc. Prof., **Anahit Manasyan** Candidate of Law, Assoc. Prof., **Vitya Yaramishyan,** Candidate of Psy. sc., Assoc. Prof., **Karen Nersisyan**, Candidate sc. ec., Assoc. Prof., **Siranush Petkiyan**, Candidate of Law
Secretary: **Avetik Harutyunyan**, Candidate of Law

Ա 948 «Արցախի Հանրապետության միջազգային ճանաչման հիմնախնդիրներն ու հեռանկարները» 2-րդ միջազգային երիտասարդական գիտաժողովի նյութերի ժողովածու. – Եր.: ԱԵԳՄՄ, 2017, 284 էջ:

Ժողովածուում ներառված են «Արցախի Հանրապետության միջազգային ճանաչման հիմնախնդիրներն ու հեռանկարները» 2-րդ միջազգային երիտասարդական գիտաժողովի նյութերը:

В сборник включены материалы 2-ой международной молодёжной конференции «Проблемы и перспективы международного признания Республики Арцах».

The material covered by the 2nd international youth conference “Issues and prospects of the Artsakh Republic’s international recognition” are included into the sourcebook.

ՀՏԴ 32.001:06
ԳՄԴ 66.0

ISBN 978-9939-1-0643-4

© Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորում (ԱԵԳՄՄ), 2017

www.aegmm.org

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Մարիամ Գրիգորյան
Արցախի պետական համալսարան, ասպիրանտ,
ԱԵԳՄՄ անդամ
mariamgrigoryan93@yandex.ru

Մարդու իրավունքների միջազգային իրավական պաշտպանության ներկա համակարգը ձևավորվել է տասնամյակների ընթացքում:

Այսօր գոյություն ունեն մի շարք երկրներ, նույնիսկ երկրների խմբեր, որոնցում հնարավոր չէ լիարժեքորեն երաշխավորել մարդու առանձին իրավունքներ և ազատություններ: Դա պայմանավորված է ոչ միայն արտաքին, այլև ներքին հանգամանքներով /քաղաքական ռեժիմ, կոռուպցիայի բարձր մակարդակ, իշխանությունների անպատասխանատվություն/: Նման իրավիճակների համար անհրաժեշտ է, որպեսզի պետությունները դրսևորեն կամք և վճռականություն[1]:

Սխեմատիկորեն մարդու իրավունքների պաշտպանության միջազգային կառուցակարգերը կարելի է բաժանել երկու խմբի՝ համընդհանուր և տարածաշրջանային:

Համընդհանուր իրավապաշտպան կառուցակարգերը դա այն մարմիններն ու կազմակերպություններն են, որոնց գործունեությունը տարածվում է ամբողջ աշխարհի վրա, անկախ պետություններից և տարածքային սահմաններից: Համընդհանուր կառուցակարգերը այս կամ այն չափով կապված են ՄԱԿ-ի հետ: Եվ դա պատահական չէ: Նախ՝ ՄԱԿ-ին անդամակցում են աշխարհի գրեթե բոլոր պետությունները, երկրորդը՝ համաձայն ՄԱԿ-ի կանոնադրության այդ կազմակերպության առաջնային նպատակներից մեկն է՝ վերահաստատել հավատը մարդու հիմնական իրավունքների, անհատի արժանապատվության և արժեքի, տղամարդու և կնոջ, ինչպես նաև մեծ ու փոքր ազգերի իրավունքների նկատմամբ: Կանոնադրությունը պարտավորեցնում է ՄԱԿ-ի գլխավոր մարմին՝ Գլխավոր ասամբլեային առանձնահատուկ ուշադրություն դարձնել մարդու իրավունքների պաշտպանությանը: Գլխավոր ասամբլեան 1948թ. ընդունեց և հռչակեց Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, իսկ դրանից հետո ընդունեց միջազգային իրավական ակտերի մի խումբ, որը նվիրված էր մարդու իրավունքների պաշտպանության տարբեր ոլորտներին /«Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիա, «Ապաքաղաքացիության կրճատման մասին» կոնվենցիա, «Ցեղասպանություն հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին» կոնվենցիա և այլն/: Մարդու իրավունքների վերաբերյալ հարցերը ուսումնասիրվում են Գլխավոր ասամբլեայի կոմիտեներում և նրա օժանդակ մարմիններում:

Ասվածով հանդերձ, այսօր իրավունքի գերակայության տեսանկյունից, ձևավորվել է ոչ իրավաչափ պրակտիկա, որի արդյունքում մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային իրավական փաստաթղթերի իրավազորությունը կարծես

[1] Мутагирова Д.З. Права и свободы человека: теория и практика. Москва, Логос 2006 г.,с 509.

թե տարածվում է միայն ճանաչված պետությունների քաղաքացիների վրա, մինչդեռ չճանաչված պետությունների ազգաբնակչությունը ըստ էության, միջազգային կոնվենցիոն նորմերի պաշտպանությունից զրկված է: Ինչ խոսք, այս մասին ուղղակիորեն որևէ միջազգային պայմանագրում կոնվենցիայում կամ համաձայնագրում նշված չէ, սակայն, ինչպես արդեն նշեցինք, դա փաստ է, որի վկայությունն է նաև միջազգային կազմակերպությունների և մարդու իրավունքների միջազգային դատարանների գործելակերպը: Միջազգային կազմակերպությունները և մարդու իրավունքների միջազգային դատարանները այսօր փաստացի հրաժարվուն են ընդունել և քննել չճանաչված պետությունների քաղաքացիների դիմումը ուղղված իրենց պետության և հանրային իշխանության դեմ:

Մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի կատարումը ապահովելու նպատակով ՄԱԿ-ի համակարգում գործում են հատուկ մարմիններ, որոնք հետևում են պետությունների կողմից միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների կատարմանը և մարդու իրավունքների պաշտպանությանը: Միջազգային իրավունքում այդ մարմինները հայտնի են մարդու իրավունքների պաշտպանության կոնվենցիոն կառուցակարգեր անվանմամբ[1]: Այդ կոնվենցիոն մարմինները կարող են ստանալ և ուսումնասիրել անհատական գանգատներ կամ հաղորդումներ: Սակայն, այսօր ձևավորված պրակտիկայի արդյունքում ՄԱԿ-ի կոնվենցիոն մարմինները փաստորեն չեն ուսումնասիրում այն անհատական գանգատները կամ հաղորդումներն, որոնք գալիս են չճանաչված պետություններից, դրանք իրենց գործունեության ընթացքում երբևէ քննության չեն առել անհատական գանգատ որևէ վիճելի կարգավիճակ ունեցող տարածքի բնակչից:

Անընդունելի է այն, որ այն ազգը կամ ժողովուրդը որը ցանկություն է հայտնում օգտվել 1966թ. Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին, Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրերի 1-ին հոդվածներով, ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի բանաձևերով[2] և 1975թ. Հելսինկիի եզրափակիչ փաստաթղթով նախատեսված ինքնորոշման իր իրավունքից զրկված է, ինչպես համընդգրկում, այնպես էլ տարածաշրջանային միջազգային պայմանագրերի պաշտպանության հնարավորությունից: Մեղմ ասած, սա կարելի է որակել որպես «միջազգային անարխիա»:

Դրա վառ օրինակը կարող է հանդիսանալ Արցախի Հանրապետության և նրա ազգաբնակչության փորձը: Ըստ էության, վերջիններս չեն օգտվում մարդու իրավունքների և օրինական շահերի պաշտպանության որևէ միջազգային կառուցակարգի պաշտպանությունից: Չնայած, Արցախի Հանրապետությունը միջազգայնորեն ճանաչված չէ, սակայն ունի ճանաչված պետություններին բնորոշ բոլոր բնութագրիչները: Ներպետական մակարդակով Արցախի Հանրապետությունը պաշտպանում է իր քաղաքացիների և երկրում գտնվող օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց իրավունքները և օրինական շահերը:

---

[1] Human Rights: A Basic Handbook for UN Staff. Office of the Hight commissionier for human rights, United Nations staff college project. p 49

[2] Օրինակ՝ 637A(VII), 637C(VII), 738(VIII), 837(IX), 523(VI), 626(VII), 1514(XV), 1314(XIII), 1515(XV), 1654(XVI), 1803(XVII) բանաձևերը:

Այսպիսով, կարելի է արձանագրել, որ Արցախի Հանրապետությունը թեկուզ դեռևս միջազգայնորեն ճանաչված չէ, սակայն ժողովրդավարության մակարդակով ոչնչով չի զիջում դե յուրե ճանաչված պետություններին:

Մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությունը լինելով ***jus cogens*** նորմ, որևէ կերպ տարբերակում չի դնում ճանաչված և չճանաչված պետությունների միջև: ՄԱԿ-ի կանոնադրությունում և այլ միջազգային իրավական համընդգրկուն փաստաթղթերում ամրագրված «յուրաքանչյուր ոք», «անձ», «մարդ» հասկացությունները ունեն համընդհանուր նշանակություն, դրանք ներառում են բոլոր մարդ արարածներին, անկախ որ երկրում են նրանք բնակվում, անկախ նրանց բնակության պետությունը միջազգայնորեն ճանաչված է թե ոչ: Եվ դա բնական է, Երկիր մոլորակի վրա չկա թեկուզ մեկ քառակուսի կիլոմետր, որի վրա չտարածվի ՄԱԿ-ի կանոնադրության և մարդու իրավունքներ վերաբերյալ մյուս միջազգային իրավական համընդգրկուն փաստաթղթերի իրավաբանական ուժը:

Ի դեպ, Արցախի Հանրապետության քաղաքացին, կամ նրա իրավազորության ներքո գտնվող օտարերկրացին չի կարող իր իրավունքների պաշտպանության համար դիմել նույնիսկ մարդու իրավունքների միջազգային իրավական պաշտպանության այնպիսի տարածաշրջանային կառուցակարգի ինչպիսին՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն է:

Որպես օրինակ կարող է ծառայել ԼՂՀ-ի բնակիչ Ա.Հ-ի գործը: Երբ նա գանգատով դիմեց Մարդու իրավունքների եվրոպական դատարան, այնտեղից 07.06.05թ. ստացավ հետևյալ բովանդակությամբ պատասխանը. «Մարդու իրավունքների եվրոպական դատարանը կարող է քննության առնել միայն այն գանգատները, որոնք ուղղված են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան վավերացրած պետությունների դեմ: Արցախն այդպիսին չի հանդիսանում: Այդ իսկ պատճառով, խնդրում եմ պարզաբանել, Կոնվենցիան վավերացրած որ պետության դեմ է ուղղված Ձեր դիմումը կից ներկայացնում եմ այդ պետությունների ցանկը: Հակառակ դեպքում, Դատարանը չի կարողանա քննել Ձեր դիմումը»: Գանգատի հեղինակը, որը դժգոհում էր իր տղայի նկատմամբ ԱՀ դատարանների կողմից կայացված վճիռներից, գտնում է, որ տվյալ գործով խախտվել է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված արդար դատաքննության իրավունքը: Գործի նյութերից ակնհայտ է, որ ԱՀ դատարանները ո՛չ օրենսդրական և ո՛չ էլ փաստական առումով Հայաստանի կամ Ադրբեջանի դատական համակարգի հետ որևէ առնչություն չունեն: Արցախի Հանրապետությունը այնպիսի աշխարհագրական տարածք է զբաղեցնում, որն ըստ էության գտնվում է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի իրավազորության ներքո[1]:

Եթե հետևենք Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վերը նշված պատասխանի տրամաբանությանը կարելի է եզրակացնել, որ Արցախի Հանրապետությունը միջազգային համակարգից դուրս է գտնվում, հետևաբար ազատվում է իր իրավազորության ներքո գտնվող անհատների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության պարտավորությունից: Հետաքրքիր է, եթե

[1] Оганесян Владимир. Некоторые проблемы защиты прав человека в непризнанных государствах. Международный альманах. Конституционное правосудие в новом тысячелетии. Ереван 2005, стр. 214-219.

ԱՀ-ն որոշի իր տարածքում քիմիական կամ միջազգայնորեն արգելված զենք արտադրի ինչ հիմքով պետք նրան արգելեն:

Այսպիսով, արգելվում է նման իրավիճակ, երբ որ վիճելի կարգավիճակ ունեցող Արցախի Հանրապետությունում անհատը երկու տասնամյակից ավելի զրկված է իր իրավունքները և օրինական շահերը պաշտպանելու հնարավորությունից:

Ստեղծված իրավիճակում առկա անորոշ իրավիճակը հնարավորինս հարթելու համար առավել նպատակահարմար կլինի միջազգային համընդհանուր մակարդակով ՄԱԿ-ի կողմից կամ տարածաշրջանային մակարդակով ընդունել միջազգային իրավական փաստաթուղթ, որը հենց նվիրված կլինի չճանաչված պետություններում անհատի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանը: Իսկ այդ փաստաթղթի դրույթների կատարումը ապահովելու նպատակով ստեղծել մարմին, որը կհետևի դրանում ամրագրված դրույթների ex jure կատարմանը: Տրամաբանորեն ճիշտ կլինի, որ Արևելյան Եվրոպայի մի շարք վիճելի կարգավիճակ ունեցող պետություններ համախմբվեն և նմանօրինակ առաջարկությամբ դիմեն ՄԱԿ-ին կամ Եվրոպայի Խորհրդին:

Գտնում ենք, որ միջազգային հանրությունը պետք է հետևի Մարդու իրավունքների նախկին գլխավոր հանձակատար Նավի Փիլեյի արտահայտած այն գաղափարին, որ մարդու իրավունքները չեն ճանաչում սահմաններ: Կենսականորեն անհրաժեշտ է հասնել վիճելի տարածքներում մարդու իրավունքների վերաբերյալ հիմնական հարցերի լուծմանը անկախ այդ տարածքների քաղաքական ճանաչումից կամ իրավական կարգավիճակից[1]:

Մարիամ Գրիգորյան

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Բանալի բառեր՝ *մարդու իրավունքներ, միջազգային պաշտպանություն, Արցախի Հանրապետություն*

Իրողություն է, որ Արցախի Հանրապետության բնակչության կազմի մեջ մտնող անհատները ինքնորոշման համար պայքարի առաջին իսկ պահից մինչև սեփական պետության հռչակման և դրա միջազգային իրավական ճանաչման ավարտը ըստ էության զրկված են միջազգային հանրային իրավունքի նորմերով պաշտպանվելու հնարավորությունից:

Հոդվածում ուսումնասիրվում և քննարկվում է ԱՀ-ում անհատի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության միջազգային իրավական պաշտպանության հետ կապված հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները:

[1] ООН, Аппарат Верховного комиссара ООН по правам человека, Human rights do not have any borders: Pillay («Пиллэй: права человека не знают границ»), 14 февраля 2013 г., http://www.ohchr.org/EN/NewsEvents/Crp.s/DisplayNews.aspx?NewsID=12991&LangID=E (на англ. языке)

Мариам Григорям

МЕЖДУНАРОДНО-ПРАВОВЫЕ ГАРАНТИИ ЗАЩИТЫ ПРАВ И ЗАКОННЫХ ИНТЕРЕСОВ ЧЕЛОВЕКА В РЕСПУБЛИКЕ АРЦАХ И ПРОБЛЕМЫ СВЯЗАННЫЕ С ИХ ОБЕСПЕЧЕНИЕМ

Ключевые слова: *права человека, международная защита, Республика Арцах*

Факт, что лица входящие в состав населения Республики Арцах с первого момента борьбы за самоопределение до правозглашения собственного государства и его международно-правого признания фактически лишены возможности защищаться нормами международного публичного права.

В статье рассматриваются и обсуждаются проблемы и пути их решения, связанные с международной правовой защитой прав и законных интересов человека в Республике Арцах.

Mariam Grigoryan

INTERNATIONAL LEGAL GUARANTEES FOR THE PROTECTION OF THE HUMAN RIGHTS AND LEGITIMATE INTERESTS IN REPUBLIC OF ARTSAKH AND ISSUES RELATED TO THEIR PROVISION

Key words: *human rights, international protection, Republic of Artsakh*

It is a fact that the humans who are part of the Artsakh Republic population are essentially deprived of the possibility of defending international public law from the beginning of the struggle for self-determination until the end of the proclamation of their own state and its international legal recognition.

This article deals with the issues related to the international legal protection of the human rights and legal interests in the Republic of Artsakh and the ways of theirsolution.